# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածի այն է՝ ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում: Օրենքի նշված պահանջը կատարելու նպատակով անհրաժեշտ է ընդունել Չարենցավան համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին Չարենցավան համայնքի ավագանու որոշման նախագծը:

Չարենցավան համայնքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ Չարենցավան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ